

28.01.2018թ.

ՄԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱՂՅԱՆԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁԸ ՀԱՅՈՑ ԲԱՆԱԿԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Հարգելի համաքաղաքացիներ

Հայաստանի Հանրապետության տոնացույցում հունվարի 28-ն արդեն 26 տարի նշվում է՝ որպես ՀՀ Զինված ուժերի կազմավորման օր:

Հայոց բանակը ստեղծվեց հայ ժողովրդի համար վճռական ու բախտորոշ ժամանակաշրջանում, անցավ բարդ փորձաշրջան, թրծվեց մեզ պարտադրված պատերազմում և այժմ իր մարտունակության, փորձառության և պատրաստավածության շնորհիվ դարձել է օրինակելի ոչ միայն տարածաշրջանում:

Հայոց բանակը մեր պետության և պետականության վավերագիրն է, հայ ժողովրդի ապրելու և արարելու իրավունքը:

Այս տոնական օրը ևս մեկ առիթ է՝ անդրադառնալու մեր բանակի անցած ուղուն, ուղի, որ պսակվել է քաջորդիների արյամբ, որոնք վճռական պահին զոհասեղանին դրեցին իրենց կյանքը՝ սրբագործելով հաղթանակի ու խաղաղության ճանապարհը:

Փառք բոլոր ընկածներին, փառք մեր զինվորներին, որոնք իրենց աննկուն կամքի, անսահման հավատի, քաջության, կամային բարձր որակների շնորհիվ դարձան հերոսներ ու մեր ժողովրդի արժանի զավակներ:

Անկախ անցյալ դարի 90-ականների սկզբին կնքված զինադադարի՝ Հայաստանի և Արցախի սահմաններն անառիկ պահող զինվորները, հրամանատարները, սպաները հերոսացման և անձնագոհության, քաջության և արիության բազմաթիվ օրինակներով ապացուցել և ապացուցում են, որ կրում են հայրենիքի նկատմամբ պարտքի և պատասխանատվության մեծագույն զգացումը:

Տասնամյակների ընթացքում բանակը հայրենասեր ու նվիրյալ զավակների շնորհիվ հաղթահարել է մի շարք փորձություններ՝ անցնելով ինքնահաստատման ճանապարհ:

Այսօր էլ բանակաշինությանը վերաբերող ծրագրերը, զինված ուժերում իրականացվող բարեփոխումները լավագույն վկայությունն են այն իրողության, որ բանակը կենդանի օրգանիզմ է՝ իր առանձնահատկություններով և պահանջներով, և յուրաքանչյուր զինվոր ոչ միայն հայրենիքի պաշտպանն է, այլ նախևառաջ մեր բանակի կայացման, ամրապնդման երաշխավորը, մեր երկրի տերը:

Այս տոնական պահին շնորհավորում եմ հայ զինվորին, նրան, ով օրեր առաջ է համարել Հայոց բանակի շարքերը, նրան, ով արդեն հաղթահարել է բանակային կյանքի բոլոր դժվարությունները և հպարտորեն է կրում իր կոչումը, բոլոր նրանց, ովքեր բանակաշինության պատասխանատու գործի ակունքներում են և Հայաստանի զինված ուժերում են գրում իրենց կենսագրությունը, շնորհավորում եմ Հայաստանի անվտանգության զարկերակի վրա իրենց ձեռքը պահած սպային ու հրամանատարին՝ մաղթելով խաղաղ ու անվտանգ ծառայություն:

Շնորհավորում եմ զինվորների ծնողներին ու հարազատներին՝ մաղթելով համբերություն, հոգեկան խաղաղություն:

Մեզանից յուրաքանչյուրն իր մեջ կրում է Հայոց բանակի մի մասնիկը, նրա երեկն է, այսօրը ու ապագան, և ուրեմն տոնը բոլորինս է՝ մեծից փոքր:

Հարգելի համաքաղաքացիներ

Իմ, համայնքի ղեկավարի աշխատակազմի և համայնքի ավագանու անունից շնորհավորում եմ բոլորիս այս նվիրական տոնի առթիվ, հավատարիմ ազգ-բանակ գաղափարախոսությանը՝ պահենք ու պահպանենք Հայոց բանակը, ուժ ու վստահության տանք նրան և ուժ առնենք նրանից՝ անպարտ և ուժեղ դարձնելով մեր երկիրը, անառիկ մեր սահմանները, խաղաղ հայրենի երկինքը: